ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» փետրվարի 2015 թվական N 6–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին <<Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 63-րդ հոդվածով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 3-րդ մասով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, 6-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի Համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 205-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը 147.743.100 (մեկ հարյուր քառասուն յոթ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝ վարչական մաս՝ 107.687.800 (մեկ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մաս՝ 40.055.300 (քառասուն միլիոն հիսունհինգ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղել 2014 թվականի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը: Վարչական մասի 107.687.800 (մեկ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ մնացորդից 16.761.500 (տասնվեց միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը թողնել վարչական մաս, 14.042.100 (տասնչորս միլիոն քառասուներկու հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը որպես սուբվենցիայի մնացորդ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 116.939.500 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս,

2)հաստատել՝

ա. եկամուտները՝ 3.144.933.500 (երեք միլիարդ մեկ հարյուր քառասունչորս միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ծախսեր՝ 3.292.676.600 (երեք միլիարդ երկու հարյուր իննսունինը երկու միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հաստատել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեն եռամսյակային բաշխումներով՝ համաձայն հավելվածներ NN 1-5-ի:

3. Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստաֆոնդի առաջին եռամսյակի նախատեսված 41.984.900 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս:

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Խաչատրյան _____		
Տ.Հովհաննիսյան _____		
Վ. Հունանյան _____		
Ռ.Մխիթարյան _____		
Է. Մկրտչյան _____		
Վ.Շիրինյան _____		
Ե. Պողոսյան _____		
Մ. Սահակյան _____		
Տ. Փանոսյան _____		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«06» փետրվարի 2015 թ.